ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ապրիլի 2025 թվականի N 0485-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 3-րդ փողոց,1/1 հասցեում քաղաքացի Էդվարդ Տիգրանի Ղազարյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 212,0 քմ մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված մարզադահլիճը՝ 196,2 քմ արտաքին և 148,0 քմ ներքին մակերեսով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ղեկավարի 28.09.2021թ. տրված թիվ 170-Ա որոշմամբ ճանաչվել է Մայիսյան գյուղական համայնքի սեփականություն և օրինականացվել է: Քաղաքացի Էդվարդ Տիգրանի Ղազարյանի իրավահաջորդ Անժելա Վազգենի Ղազարյանի կողմից դիմում է ներկայացվել Արմավիրի համայնքապետարան նշված շինության (մարզադահլիճը՝ 196,2 քմ արտաքին և 148,0 քմ ներքին մակերեսով) զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 212,0 քմ մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու մասին: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 կետի Բ) ենթակետով,35.1 և 36-րդ կետերով, հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 16-ի սեփականության իրավունքի վկայագրը,2024 թվականի օգոստոսի 16-ի ժառանգության իրավունքի վկայագիրը և քաղաքացի Անժելա Վազգենի Ղազարյանի 31.03.2025թ. թիվ 1682 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 3-րդ փողոց,1/1 հասցեում գտնվող /04-043-0615-0002 կադաստրային ծածկագրով,անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N19112021-04-0085 վկայական/ Էդվարդ Տիգրանի Ղազարյանի կողմից ինքնակամ կառուցված 04-043-0615-0002-001 կադաստրային ծածկագրով մարզադահլիճը՝ 196,2 քմ արտաքին և 148,0 քմ ներքին մակերեսով օտարել Էդվարդ Տիգրանի Ղազարյանի իրավահաջորդ Անժելա Վազգենի Ղազարյանին՝ մարզադահլիճը՝ 196,2 քմ մակերեսով 1քմ համար 10881 դրամ,

ընդհանուր 2134852 (երկու միլիոն հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 212,0 քմ մակերեսով հողամասն օտարել՝ հողամասի կադաստրային արժեքով՝ 1 քմ 1221 ՀՀ դրամ, ընդհանուր 258852 (երկու հարյուր հիսունութ հազար ութ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ, ընդհանուր կազմում է 2393704 (երկու միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ:

2. Վաճառքի գնին հավելվում են միչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեց հազար) ՀՀ դրամ: Ընդհանուր անհրաժեշտ է վճարել 2419704 (երկու միլիոն չորս հարյուր տասնինը հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ գումար:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում 2419704 (երկու միլիոն չորս հարյուր տասնինը հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 15-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսրդությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. ապրիլի 09
ք. Արմավիր